<u>ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ</u>

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

# 2020-2022

## ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

## ԵՎ 2020

## ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

## 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունն իրականացնում ծրագրեր, որոնք ուղղված են Հայաստանի քաղաքացիների բարեկեցության բարձրացումը՝ տնտեսական կյանքում նրանց մասնակցային հնարավորությունների ավելացման միջոցով, ինչը դրսևորվելու է մրցունակ մասնավոր հատվածում աշխատատեղերի և յուրաքանչյուր մարդու աշխատանքային եկամուտների զգալի ավելացման ձևով: Նպատակի իրականացմանն ուղղված քաղաքականությունների շրջանակն ամփոփվում է մրցունակության բարձրացման գաղափարի ներքո, որի հիմքում ընկած է արտադրողականության աճը: Տնտեսական քաղաքականության տեսլականը կառուցվում է գլոբալացման, աղյունավետ առևտրատնտեսական հարաբերությունների ու տեխնոլոգիական սրընթաց զարգացումների համատեքստում ազատ մրցակցությամբ ու օրինակելի գործարար միջավայրով երկրի կայացման առանցքի շուրջ:

Կանխատեսելի և վստահելի գործարար միջավայրը լինելու է ներդրումների ներգրավման հիմնական գրավականը և ապահովելու է ինչպես ներքին գործարար ներուժի իրացման արդյունավետ կենսամիջավայր, այնպես էլ օտարերկրյա ներդրումների կայուն ներհոսք: Մեծ են հավակնությունները օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման ասպարեզում, որոնք ամրապնդվելու են ոչ միայն երկրի ու Կառավարության հանդեպ ձևավորված վստահության աննախադեպ պաշարով, այլև՝ ինստիտուցիոնալ ու օրենսդրական դաշտում նոր նախաձեռնություններ մեկնարկելու և մեկնարկած մի շարք բարեփոխումների գծով արդյունավետ ու արագ ընթացք ապահովելու պատրաստակամությամբ:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման քաղաքականության հիմքում ընկած է լինելու Հայաստանի զբոսաշրջության ներուժի լիարժեք իրացման հեռանկարը՝ առկա նախադրյալների հիման վրա: ՓՄՁ սուբյեկները, հատկապես սկսնակ գործարարները, ձեռնարկատիրական անհրաժեշտ կրթության և կարողությունների զարգացման կարիք ունեն նոր տեխնոլոգիաների, շուկայավարման, բիզնես պլանավորման, հաշվապահական հաշվառման, մարդկային ռեսուրսների և ֆինանսական կառավարման և այլ հարցերում: Զբոսաշրջության ոլորտի զարգացման քաղաքականության հիմքում ընկած է լինելու Հայաստանի զբոսաշրջության ներուժի լիարժեք իրացման հեռանկարը՝ առկա նախադրյալների հիման վրա: Համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային նորարար պրոդուկտների մրցունակության բարձրացման նպատակով լիարժեք կօգտագործվեն երկրի զբոսաշրջային հնարավորությունները՝ հնարավորինս կապիտալացնելով տարածքային առանձնահատկությունները և երկրի պատմամշակութային ժառանգությունը:

**1058 «Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ»** ծրագրի շրջանակներում իրականացվում է երեք միջոցառում որոնք իրենցիցներկայացնում են նախարարության աշխատակազմի, ԱՀԿ-ում և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների և տնտեսական հետազոտությունների կենտրոնի

պահպանման ծախսերը, որոնց ընդհանուր գումարը 2019 թվականին կազմել է 1090033,4 հազար դրամ:

**1104 «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»** ծրագիրը հանդիսանում է ոլորտի կարևոր ծրագրերից: Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության 2017, 2018 և 2019 թվականների ծրագրերի իրականացման համար ՀՀ 2017, 2018 և 2019 թվականների պետական բյուջեներից հատկացվել է համապատասխանաբար 152,600.0 հազ. դրամ, 152,600.0 հազ. դրամ և 183,120.0 հազ. դրամ, որի հաշվին սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել համապատասխանաբար 4700, 4000 և սպասվում է 7000-8000 աջակցություն 2019թ. ՓՄՁ սուբյեկտի:

**1165 «Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր»** ծրագրի ներքո իրականացվում է ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված չորս միջոցառում, որից եչքը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից և 2019 թվին ընդամենը 5461380.5 հազար դրամ գումարով:

**1067 «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում»** ծրագրով իրականացվում է «Ստանդարտների մշակման ծառայությունները» և «Աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին» միջոցառումները որոնք 2017 և 2018 թվերին համապատասխանաբար ֆինանսավորվել են 14123,4 հազար դրամ և 13900,0 հազար դրամով, իսկ 2019 թվին 14123,4 հազար դրամ և 16680,0 հազար դրամ: Միջնաժամկետ հատվածում հատկացումները նախատեսվում է նույն չափով շարունակել:

**1190 «Զբոսաշրջության զարգացման ծրագիր»** ծրագրի շրջանակներում իրականացվում են թվով 5 միջոցառումներ, որից երկուսն իրականացվում է ՀՀ վարչապետի աշխատակազմի միջոցով և ամբողջ գումարը 2019 թվին կազմել է 2171730,3 հազար դրամ:

**1079 «Պետական գույքի կառավարում»** ծրագրի շրջանակներում իրականացվում է Պետական գույքի կառավարման կոմիտեի յոթ միջոցառումները, որոնց գումարը 2019 թվին կազմել է 1081296,7 հազար դրամ:

**9002 «Աջակցություն մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանությանը»** ծրագրում ընդգրկված է երկու միջոցառում որոնց համար 2019 թվին նախատեսվել է 385145.9 հազար դրամ գումար:

**1162 «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»** ծրագրի շրջանակներում որպես ԲՍԿ իրականացվում է երկու միջոցառում որոնց համար 2019 թվին հատկացվել է 214370,4 հազար դրամ գումար:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

| Նպատակը | Ծրագրի դասիչը և անվանումը | Ծրագրի վերջնական արդյունքները | | | | | Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Չափորոշիչը | Ելակետը | | Թիրախը | | |
| | | | Ցուցա-նիշը | Ժամ-կետը | Ցուցա-նիշը | Ժամ-կետը | |
| *ՓՄՁ զարգացում և ընդլայնում* | 1104 «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» | *ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում, %* | *24,6%* | *2017թ* | *27,0* | *2020թ* | *ՀՀ կառավարության 2019-2023 թթ գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկ /ՓՄՁ ոլորտի զարգացման ռազմավարության իրականացմամբ ապահովվող ուղենիշային ցուցանիշ/* |
| *Նոր ոլորտների զարգացման նպաստում՝ արտահանմանն աջակցություն՝ նոր շուկաների ընդլայնման աջակցություն՝ սերտիֆիկացման ծառայությունների փոխհատուցում՝ վարկավորման տոկոսների սուբսիդավորում՝ կարողությունների զարգացում՝ արտահանման խնդիրների հետազոտում* | 1165 «Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր» | *Ապրանքների արտահանում/ՀՆԱ, տոկոս* | *19,7%* | *2017թ* | *22,3* | *2020թ* | |
| | | *Աջակցություն ստացած մշակող արդյունաբերությունում գործող կազմակերպությունների կողմից ապրանքների արտահանում, մլրդ դրամ* | *5,7* | *2017թ* | *7* | *2020թ* | *ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65 – Ա ծրագրի «5.6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԸ՝ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ»* |
| | | *Օտարերկրյա ուղղակի ներդրումների կշիռը ՀՆԱ-ում* | *2,1%* | *2018թ* | *2,5%* | *2020թ* | |
| *ՀՀ ՏԶՆ նախարարության աշխատակազմի, «Տնտեսական հետազոտությունների կենտրոն»-ի և ՀՀ առևտրային ներկայացուցիչների պահպանում և զարգացում* | 1058 «Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» | *Մշակված չէ* | | *անժամկետ* | | *անժամկետ* | *Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացում, մասնավորապես՝ արտահանման խթանում և ներդրումների ներգրավում ՀՀ կառավարության ծրագիր (5.5 և 5.6 բաժիններ )* |
| | | *Մշակված չէ* | | *անժամկետ* | | *անժամկետ* | |
| | | *Ոլորտային թեմատիկ հետազոտություններ, կլոր սեղաններ* | *4/2* | *2018* | *4/2* | *2022* | |
| Արտադրանքի, ծառայությունների և գործընթացների անվտանգության մակարդակի բարելավում միջազգային ու տարածաշրջանային հացվատարմագրման համակարգերին ինտեգրում | 1067 «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում» | Արտադրանքի և ծառայությունների գծով ազգային ստանդարտների մշակում | *30* | *2018* | *30* | *2022* | *ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրի «5.5. ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ»* |
| | | Հավատարմագրում | *17* | *2018* | *19* | *2022* | |
| Միջազգային զբոսաշրջային այցելությունների աճ | 1190 «Զբոսաշրջության զարգացման ծրագիր» | *Հայաստանի գրավչության բարձրացում և զբոսաշրջիկների ավելացում* | *10,5%* | *2018թ* | *Առնվազն 8.0%* | *Յուրաքանչյուր տարի* | *Զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր զբոսաշրջային ձևերի զարգացում, ենթակառուցվածքների բարելավում,* |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| *Մտավոր սեփականության իրավատերերի բացառիկ իրավունքների շտեմարանի շարունակական համալրում և վարում* | 9002 «Աջակցություն մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանությանը» | *Գյուտերի և օգտակար մոդելների գրանցում/ Ապրանքային և սպասարկման նշանների գրանցում* | *2906/ 2022* | *2019* | *Հնարավոր չէ կանխատեսել* | *Շարունակական* | |
| Պետական գույքի հաշվառում՝ գույքագրում՝ աճուրդների կազմակերպում՝ մասնավորոցվող գույքի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում | 1079 «Պետական գույքի կառավա-րում» | *Տես՝ Հավելված 3 Մաս 3* | | | | | *ՀՀ կառավարության ծրագրի 6-րդ գլխի «6.6. Պետական գույքի կառավարման» բաժնի դրույթներին համապատասխան* |

## 3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Տնտեսական քաղաքականության տեսլականը կառուցվում է գլոբալացման, աղյունավետ առևտրատնտեսական հարաբերությունների ու տեխնոլոգիական սրընթաց զարգացումների համատեքստում ազատ մրցակցությամբ ու օրինակելի գործարար միջավայրով երկրի կայացման առանցքի շուրջ:

Տնտեսական զարգացման շարժիչը լինելու են նորարարությունը և ստեղծագործելու ծիրքը, գործարար նախաձեռնողականությունը, արդյունավետություն փնտրող ներդրումները և տեխնոլոգիական տարածումը՝ այդպիսով ընդլայնելով հնարավորի սահմանները:

Տնտեսական զարգացման քաղաքականությունը խարսխվելու է երեք հենասյուների վրա, որոնք ըստ էության նաև լավագույնս արտացոլում են այն լրջագույն մարտահրավերները, որոնց անտեսումը նշանակալի սպառնալիք կդառնա երկրի երկարաժամկետ կայուն զարգացում և տնտեսական անվտանգության ապահովելու տեսակետից: Այսպես, առաջին հենասյուն արտադրողականությունն ու մրցունակությունն է՝ որպես առանցք ունենալով ինովացիոն զարգացման իրական հիմքերի ձևավորումը և ընդլայնելով տնտեսության առանձին ոլորտների՝ տեխնոլոգիական առաջընթացի ձեռքբերումները կլանելու ունակությունը: Հաջորդը ներառականությունն է՝ որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ դիտարկելով ձեռներեցությունը, ինքնազբաղվածությունը, փոքր և միջին ձեռնարկատիրությունը, երկրի ողջ տարածքի ներուժն ու տնտեսական, սոցիալական, աշխարհագրական, բնակլիմայական, պատմամշակութային բազմազանությունը: Մյուս հենասյունը արտահանման ուղղվածությունն է՝ ակտիվացնելով նպատակային ջանքերը, որպեսզի էապես ընդլայնվի տնտեսության ունակությունը՝ օգտագործելու միջազգային առևտրատնտեսական հարաբերությունների հնարավոր օգուտները:

| Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման) | Հիմնավորումներ |
|---|---|
| 1104 «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը» | |

| | |
|---|---|
| 1165 «Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր» | |
| 1190 «Զբոսաշրջության զարգացման ծրագիր» | |
| 1067«Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում» | |
| 9002 «Աջակցություն մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանությանը» | |

## 4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

| Դասիչը | | Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորություններ ի շրջանակը | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| 1058 | | **Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ** | | | |
| | 11001 | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | Պարտավորություններ իրենից ենթադրում է պահպանման ծախսեր | | ՀՀ Օրենք «Կառավարության կառուցվածքի եվ գործունեության մասին» /հոդված 2-րդ, կետ 15)/ |
| | 11002 | ԱՀԿ-ում և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների նպատակների և խնդիրների իրագործում | | | |
| 1079 | | **Պետական գույքի կառավարում** | | | |
| | 11001 | Պետական գույքի կառավարման համակարգման՝ խորհրդատվության և մոնիտորինգի ծառայություններ | | | Պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք և «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, Վարձատրությունը կարգավորվում է «Պետական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով: Աշխատակազմի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվել է ՀՀ ՏԶՆ նախարարի 11.06.2018թ.-ի թիվ 398-Լ հրամանով (փոփ. 05.11.2018թ.-ի թիվ 1000-Լ հրաման): |
| | 11002 | Աճուրդների կազմակերպման և անցկացման ծառայություններ | | | ՀՀ կառավարության 29.01.2002թ.-ի թիվ 72 որոշում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 11003 | Պետական գույքի հաշվառման՝ գույքագրման՝ ուսումնասիրությունների՝ գնահատման և սպասարկման աշխատանքների իրականացման ծառայություններ | | | Պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետ և 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 14-րդ կետեր, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, և նույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետ, 7-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, 16-րդ հոդվածի 1-ին մաս, ինչպես նաև նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ |
| | 11004 | Էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ծրագրի սպասարկում | | | ՀՀ կառավարության 13.06.2003թ.-ի թիվ 882-Ն որոշում |
| | 11005 | Պետական գույքի հաշվառման նոր ավտոմատացված ու ամբողջական համակարգի սպասարկում | | | Պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետ և 7-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 14-րդ կետեր |
| | 11006 | Կառավարական N 2 շենքում տեղակայված սարքերի և սարքավորումների հետերաշխիքային սպասարկում | | | Պետական գույքի կառավարման մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ |
| | 31001 | Պետական գույքի կառավարման կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում | | | Համաձայն Կոմիտեի կողմից ՀՀ կառավարություն և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տեխնիկական վերազինման հիմնավորումների: |
| 1067 | | **Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում** | | | |
| | 11001 | Ստանդարտների մշակման ծառայություններ | | Միջոցառման շրջանակները պարունակում են պարտադիր բաղադրիչը և միջազգային ստանդարտներին համապատասխանության խնդիրներ, որոնք իրականացվում են մարմինների կանոնադրություններին համապատասխան | «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք, Առևտրի Համաշխարհային կազմակերպության «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագիր, «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 2-րդ հոդված |
| | 11002 | Աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին | | | |
| 1104 | | **Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը** | | | |
| | 11001 | ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում | | «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք | «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն: |
| 1165 | | **Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր** | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 11001 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր | | Միջոցառումներն իրականացվում է Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ պետական բյուջեի միջոցով: | |
| | | Խորհրդատվական ծառայությունների տրամադրում | | | |
| | 31001 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում | | | |
| | 31002 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում | | | |
| 1190 | | **Զբոսաշրջության զարգացման ծրագիր** | | | |
| | 11004 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի կառավարում | | Ֆինանսավորումն իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից աջակցության ծրագրով ՀՀ պետական բյուջեի միջոցով | |
| | 12001 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված միջոցառումներ | | | |
| 9002 | | **Աջակցություն մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանությանը** | | | |
| | 11001 | Մտավոր սեփականության օբյեկտների գրանցում | | կոնվենցիա մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հիմնադրման մասին, Մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումները կանխելու նպատակով համագործակցության մասին | |
| | 31002 | ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալության տեխնիկական հագեցվածության բարելավում | | | |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1058 | | **Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ** | | | |
| | 11003 | Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ | ՀՀ կառավարության որոշում 2019-2021թթ ՄԺԾԾ հաստատված չափաքանակ | | |
| 1165 | | **Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր** | | | |
| | 11002 | ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ | | | |
| 1190 | | **Զբոսաշրջության զարգացման ծրագիր** | | | |
| | 11001 | Զբոսաշրջության զարգացման ոլորտում պետական քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման՝ պետական ծրագրերի պլանավորման՝ մշակման՝ իրականացման և մոնիտորինգի (վերահսկման) ծառայություններ | | | |
| | 11002 | Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը | | | |
| | 31001 | Զբոսաշրջության կոմիտեի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում | | | |
| Շարունակական բնույթի հայտցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| | | | | | |

## 4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

*Նշված տեղեկատվությունն ամփոփ տեսքով ներկայացվում է ՄԱՍ 3-ի հավելված 3-ով ներկայացված համապատասխան աղյուսակում:*

*Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսերի հաշվարկներն իրականացվում են հետևյալ հաջորդական փուլերով.*

***Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ճշգրտում՝***

1. **1058 «Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ»**
2. **1104 «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը»**
3. **1165 «Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր»**
4. **1067 «Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում»**
5. **1190 «Զբոսաշրջության զարգացման ծրագիր»**

## 4.3. Նոր նախաձեռնությունները

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկն է, որն ուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը, և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական զարգացման խնդրի ապահովմանը:

Նպատակ ունենալով ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն:

Ներդրումային միջավայրի բարեփոխումների շրջանակում Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) 2014-2017 թվականներին իրականացրել է Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր:

2015 թվականի մարտի 18-ին Հայաստանի Հանրապետության կառավարության (ի դեմս՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության), Հայաստանի զարգացման հիմնադրամի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի միջև ստորագրվել է խորհրդատվական համաձայնագիր: Ծրագրի բյուջեն կազմել է՝ 1 500 000 ԱՄՆ դոլար, որից կառավարության ներդրումը՝ 150 000 ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակում՝

- մշակվել է ներդրումային բարեփոխումների քարտեզը, իրականացվել է ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների շրջանում հետազոտություն՝ օտարերկրյա ներդրումների կատարման համար խոչընդոտները բացահայտելու նպատակով:
- Ներդրումային բարեփոխումների քարտեզի տրամաբանությամբ, հաշվի առնելով նաև հետազոտության արդյունքները, մշակվել և 2015թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ

ներդրումային քաղաքականության հայեցակարգը և միջոցառումների ժամանակացույցը, որի իրականացման շրջանակում մշակվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի նոր խմբագրությունը՝ ՄՖԿ խորհրդատուների աջակցությամբ (տեղական և միջազգային փորձագետներ):

- Իրականացվել է ՀՀ-ից ձկնամթերքի և ջերմոցային գյուղատնտեսական արտադրանքի արտահանման շղթաների հետազոտությունները, ինչպես նաև պանրի արտադրության և արտահանման շղթայի հետազոտություն, որոնց ընթացքում կազմակերպվել են հարցազրույցներ մասնավոր ոլորտի և պետական հատվածի մասնակիցների, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների հետ: Ուսումնասիրվել է ոլորտները կարգավորող իրավական դաշտը, ինչպես նաև փուլ առ փուլ վերլուծվել է վերոնշյալ շղթաների յուրաքանչյուր օղակում ծագող խնդիրները և ներկայացվել են դրանց հնարավոր լուծումները:
- Օտարերկրյա ներդրողների համար մշակվել է արտոնությունների համառոտ ցանկ, որում ներառված են արտոնությունների բովանդակության, տրամադրման գործընթացի և ժամկետների, արտոնություն տրամադրող մարմնի վերաբերյալ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:
- Իրականացվել են աշխատանքներ ուղղված ներդրումային քաղաքականություն մշակող գերատեսչությունների կարողությունների զարգացմանը, մասնավորապես՝ կազմակերպվել են մի շարք սեմինարներ:

Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներդրումային միջավայրի բարելավում, օրենսդրական դաշտի կատարելագործում և Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվելու է ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:

Ներդրումային քաղաքականության կատարելագործմամբ կիրագործվեն հետևյալ նպատակները՝ ներդրողների համար առանցքային նշանակության ոլորտներ մուտք գործելու խոչընդոտների նվազում, ներդրողների պաշտպանվածության, երաշխիքների մակարդակի և օրենսդրական դաշտի կայունության բարձրացում, ավելի թափանցիկ, արդյունավետ և գործուն խթանների համակարգ, ինչի արդյունքում կարձանագրվի ներդրումների աճ:

## 5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

**ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ենթակայությամբ գործող պետական կազմակերպությունների կողմից 2020-2022թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում սպասվող եկամուտները և դրանց աղբյուրները (բացառությամբ**

**պետական բյուջեից ստացվող եկամուտների)՝ լրացված են ՄԱՍ 3-ի հավելված 7-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:**

## 6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2020-2022 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում զբոսաշրջության ոլորտի զարգացման ու պետական աջակցության ծրագրերի շրջանակներում Զբոսաշրջության զարգացման տարեկան (2020թ., 2021թ. և 2022թ.) ծրագրերն անուղղակի առնչվում են տարածքային զարգացման ծրագրերին: Ինքնին չհանդիսանալով որպես զուտ տարածքային զարգացման ծրագրեր, հիմնվելով ՀՀ կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա նպաստում են երկրի, հատկապես համայնքային բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը և համահունչ են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերում ամրագրված ՀՀ տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

**Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով վարկերի և դրամաշնորհների միջոցով ծրագրեր չեն իրականացվում, այդ իսկ պատճառով այս կետը չի լրացվում:**

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

**Տես ՄԱՍ 3-ի հավելվածներ 10-ը և 11-ը:**

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

## Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ

| |
|---|
| 1. Պետական մարմինը |
| 1.1 Պետական մարմնի անվանումը՝<br>ՀՀ ՏԶՆՆ<br>1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝<br>Չկան |
| 2. Ծրագիրը |
| 2.1 Ծրագրի անվանումը՝<br>Խորհրդատվական ծառայությունների տրամադրում<br><br>2.2 Ծրագրի դասիչը՝ 1165<br>-<br>2.3 X Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացատրություններ)՝<br>Ծրագրի իրականացումը ՀՀ ներդրումային միջավայրի բարելավելու միջոցով մեծապես կնպաստի երկրում ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) աճին, ինչը ՀՀ կառավարության կողմից համարվում է առաջնահերթություն: |
| 3. Միջոցառումը |

3.1 Միջոցառման անվանումը՝

- ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում

3.2 Միջոցառման դասիչը՝ 11003

-

3.3 Միջոցառման (պետության միջամտության) տեսակը՝

☐ Ապրանք և ծառայություն ☐ Տրանսֆերտ

X Այլ (համաֆինանսավորում)

3.4 X Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացատրություններ)՝

Ծրագրի իրականացումը ՀՀ ներդրումային միջավայրի բարելավելու միջոցով մեծապես կնպաստի երկրում ներդրումների աճին, ինչը ՀՀ կառավարության կողմից համարվում է առաջնահերթություն:

☐ Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացատրություններ)՝

3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝

☐ Պարտադիր ծախսային պարտավորություն

X Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝

☐ Շարունակական X Ոչ շարունակական

| Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը |
|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| Միջոցառում 1.<br><br>✓Անվանումը՝ ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում<br>✓Նկարագիրը՝ ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավում, թիրախավորված ոլորտներում ՕՈՒՆ ուսումնասիրություն, ներդրումային միջավայրի խոչընդոտների բացահայտում, ներդրումային խթանների մշակում, տնտեսական դիվանագիտության կարողությունների բարձրացում, Doing Business զեկույցում ընդգրկված ոլորտների գործողությունների ծրագրի մշակում, արտահանման պոտենցիալ ունեցող ընտրված արտադրանքների վերլուծություն<br>✓Շահառուների շրջանակը՝ օտարերկրյա և տեղացի ֆիզիկական և իրավաբանական անձինք | | 2019 թվականի փետրվարի 14-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՄՖԿ միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր:<br>Նախատեսվում է նաև ստորագրել միջազգային պայմանագիր՝ սույն հայտով ներկայացված ծրագրի իրականացման նպատակով: | |

4. Նպատակը

Խորհրդատվական ծառայություններ տրամադրելու ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ավելացնել ՀՀ-ում ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) ծավալները, ինչն իրականացվելու է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորման, կարգավորող իրավական դաշտի կատարելագործման, ՕՈՒՆ թիրախային ոլորտների ուսումնասիրության, ոլորտում խոչընդոտների բացահայտման միւոցով, ինչը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի գերակայություններին, ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65–Ա ծրագրի 5.6. կետին, ՀՀ կառավարության՝ 6 սեպտեմբերի 2018 թվականի N 1030 - Լ 2018-2022թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 230 կետին և ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 8-ի նիստի N 45 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգին:

5. Նկարագրությունը

Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել գործողություններ, որոնք, նպատակ ունենալով նպաստել Ներդրումային քաղաքականության բարելավմանն ու արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, իրենց մեջ ներառում են մի շարք ուղղություններ, մասնավորապես՝ ուղղված իրականացվելու են՝ ներդրումներին առնչվող իրավական ակտերի մշակում, Կառավարության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացում, օտարերկրյա ուղղակի ներդրումների բարեփոխումների արդյունքների հաղորդակցում և տարածում, օտարերկրյա ուղղակի ներդրումների ուսումնասիրություն թիրախավորված ոլորտներում, համապատասխան գերատեսչությունների հետ պիլոտային ոլորտներում/ ենթաոլորտներում ներդրումային միջավայրի խոչընդոտների բացահայտում և դրանց լուծման համար առաջարկությունների մշակում, ներդրումային խթանների

կատարելագործում, տնտեսական դիվանագիտության դասընթացների մշակում և իրականացում, Doing Business բարեփոխումների հուշագրի և զեկույցում ընդգրկված առաջնահերթ ոլորտների գործողությունների ծրագրի մշակում և իրականացման աջակցություն, խորհրդատվություն Doing Business աշխատանքային խմբին: Նախատեսվում է նաև ընտրել արտահանման պոտենցիալ ունեցող մի քանի արտադրանքներ և իրականացվել վերջիններիս վերլուծություն՝ բացահայտելու այդ արտադրանքների արտադրության (ներդրումներ ներգրավել այդ ուղղությամբ) և արտահանման հնարավորությունները:

6. Սպասվող օգուտները

Ծրագրի իրականացման արդյունքում ունենալու ենք բարելավված ներդրումային միջավայր, ինչի կապակցությամբ նախատեսվում է ավելացնել օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 0.4 տոկոսային կետով (2018թ. ՕՈՒՆ/ՀՆԱ միջին ցուցանիշը կազմել է 2.1%, ինչը 2020 թվականին նախատեսվում է հասցնել 2.5%-ի, 2019թ.ի համար կանխատեսվում է 2.3%):

7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները

Ծրագրի չիրականացում:

| 8.Արդյունքային չափորոշիչները | Չափի միավորը | 2020թ. | 2021թ. | 2022թ. | *Միջոցառման ավարտի տարեթիվը* |
|---|---|---|---|---|---|
| ՕՈՒՆ/ՀՆԱ | % | 2.5 | - | - | 2020 |
| 9. Պահանջվող ռեսուրսները | ՀՀ դրամ | 2020թ. | 2021թ. | 2022թ. | *Միջոցառման ավարտի տարեթիվը* |
| 75 000 000 | X | X | | | 2020 |
| 10. Ֆինանսավորման աղբյուրը | ՀՀ դրամ | 2020թ. | 2021թ. | 2022թ. | *Միջոցառման ավարտի տարեթիվը* |
| Պետական բյուջե | X | X | | | 2020 |

11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլընտրանքներ

Այլընտրանք # 2 (նվազագույն արդյունքների սցենար)

12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքներ

Այլընտրանք # 3

13.Այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ

-

## Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Տես յուրաքանչյուր ծրագրին կից:

## Հավելված N 6. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման աղբյուրները (ամփոփ) և առաջնահերթությունները

**Աղյուսակ 1. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման աղբյուրները (ամփոփ)**

(հազար դրամներով)

| | | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
|---|---|---|---|---|
| 1 | Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը | 75 000 | - | - |
| 2 | Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման այլ աղբյուրներ (տող 2.1 + տող 2.2.) | - | - | - |
| 2.1 | Այլ աղբյուրներից ակնկալվող ֆինանսավորում | - | - | - |
| 2.2 | Այլ ծրագրերից ակնկալվող ծախսային խնայողություններ | - | - | - |
| 3 | Նոր նախաձեռնությունների զուտ ազդեցությունը պետական բյուջեի վրա (ընդհանուր ծախս՝ հանած եկամտի այլընտրանքային աղբյուրներ և/կամ այլ ծրագրերից խնայողություններ) (տող 1 – տող 2) | 75 000 | - | - |

**Աղյուսակ 2. Նոր նախաձեռնությունների միջև առաջնահերթությունները**

| Ծրագրային դասիչը | | Նոր նախաձեռնության (Ծրագրի/ միջոցառման) անվանումը | | 2020թ (հազ. դրամ) | 2021թ (հազ. դրամ) | 2022թ (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | | |
| Հայցողական ծախսերին առնչվող նոր նախաձեռնություններ | | | | | | |
| | | *Խորհրդատվական ծառայությունների տրամադրում* | ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում | 75 000 | - | - |

## Հավելված N 7. Պետական մարմնի և դրա ենթակա կազմակերպությունների ստացվելիք եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

(հազար դրամներով)

| Եկամուտների ստացման աղբյուրների անվանումները | Փաստացի ըստ | 2019 թվականի | Կանխատեսում |
|---|---|---|---|

| | 2018 թվականի տարեկան հաշվետվության | սպասողական | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
|---|---|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **739267.0** | **675713.0** | **672373.0** | **676025.0** | **681525.0** |
| այդ թվում՝ | | | | | |
| 1. Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից | | | | | |
| ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՊՈԱԿ | 57545.0 | 61567.0 | 62000.0 | 62500.0 | 63000.0 |
| ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՓԲԸ | 229122.0 | 229000.0 | 230000.0 | 235000.0 | 240000.0 |
| ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ | 452600.0 | 385146.0 | 380373.0 | 378525.0 | 378525.0 |

### Հավելված N 8. Բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերը՝ վարչատարածքային բաժանմամբ (ըստ մարզերի)

Նախարարության բոլոր ծրագրերն իրականացվում են Երևանում:

### Հավելված N 9. Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը

**Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով նպատակային վարկեր և դրամաշնորհների իրականացվելիք ծրագրերի մասով տեղեկատվություն չկա:**

### Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար

**Աղյուսակ 1. Ծրագրերի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2020-2022 թթ համար**

(հազ. դրամ)

| Ծրագրային դասիչը | | Ծրագրի/միջոցառման անվանումը | Գոյություն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը (հազ. դրամ) | | | Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը (հազ. դրամ) (-) | | | Նոր նախաձեռնություններ (հազ. դրամ) (+) | | | Միջոցառման գծով ամփոփ ծախսերը (հազ. դրամ) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | 2020թ | 2021թ | 2022թ | 2020 թ | 2021 թ | 2022 թ | 2020 թ | 2021 թ | 2022 թ | 2020թ | 2021թ | 2022թ |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ | | | | | | | | | | | | | | |
| *1058* | | **Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական** | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ** | | | | | | | | | | | | |
| | *11001* | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | 853952.3 | 854166.9 | 854166.9 | | | | | | | 853952.3 | 854166.9 | 854166.9 |
| | *11002* | ԱՀԿ-ում և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների նպատակների և խնդիրների իրագործում | 235533.0 | 235533.0 | 235533.0 | | | | | | | 235533.0 | 235533.0 | 235533.0 |
| *1067* | | **Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում** | | | | | | | | | | | | |
| | *11001* | Ստանդարտների մշակման ծառայություններ | 20123.4 | 20123.4 | 20123.4 | | | | | | | 20123.4 | 20123.4 | 20123.4 |
| | *11002* | Աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգին | 16680.0 | 16680.0 | 16680.0 | | | | | | | 16680.0 | 16680.0 | 16680.0 |
| *1165* | | **Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր** | | | | | | | | | | | | |
| | *11002* | *ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ* | 1072141.0 | 1072141.0 | 1072141.0 | | | | | | | 1072141.0 | 1072141.0 | 1072141.0 |
| | *11003* | *Խորհրդատվական ծառայությունների տրամադրում /նոր նախաձեռնություն/* | 0.0 | 75000.0 | 0.0 | | | | | 75000 .0 | | 0.0 | 75000.0 | 0.0 |
| *1104* | | ***Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը այդ թվում*** | | | | | | | | | | | | |
| | *11001* | *ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում և կառավարում* | 183120.0 | 183120.0 | 183120.0 | | | | | | | 183120.0 | 183120.0 | 183120.0 |
| *1190* | | **Զբոսաշրջության զարգացման ծրագիր** | | | | | | | | | | | | |
| | *11001* | *Զբոսաշրջության զարգացման ոլորտում պետական քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման՝ պետական ծրագրերի պլանավորման՝ մշակման՝ իրականացման և մոնիտորինգի (վերահսկման) ծառայություններ* | 95905.3 | 96809.0 | 98604.1 | | | | | | | 95905.3 | 96809.0 | 98604.1 |
| 9590 5.3 | 96809 .0 | 98604.1 | 554800.0 | 463100.0 | 457700.0 | | | | | | | 554800.0 | 463100.0 | 457700.0 |
| | *11004* | *Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող* | 56610.4 | 59343.24 | 62261.76 | | | | | | | 56610.4 | 59343.24 | 62261.76 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի կառավարում* | | | | | | | | | | | | |
| | *12001* | *Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված միջոցառումներ* | 3545000.0 | 7296300.0 | 16051860.0 | | | | | | | 3545000.0 | 7296300.0 | 16051860.0 |
| | *31001* | *Զբոսաշրջության կոմիտեի կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում* | 3730.0 | 3700.0 | 3700.0 | | | | | | | 3730.0 | 3700.0 | 3700.0 |
| 9002 | | ***Աջակցություն մտավոր սեփականության օբյեկտների պաշտպանությանը*** | | | | | | | | | | | | |
| | *11001* | *Մտավոր սեփականության օբյեկտների գրանցում* | 351118.4 | 349292.4 | 349292.4 | | | | | | | 351118.4 | 349292.4 | 349292.4 |
| | *31002* | *ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալության տեխնիկական հագեցվածության բարելավում* | 29255.0 | 29255.0 | 29255.0 | | | | | | | 29255.0 | 29255.0 | 29255.0 |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի) | | | | | | | | | | | | | | |
| *1058* | | Տնտեսական զարգացման և ներդրումների ոլորտում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ այդ թվում | | | | | | | | | | | | |
| | *11003* | Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | |
| Հայեցողական ծախսերին դասվող այլ միջոցառումներ | | | | | | | | | | | | | | |
| | | *<Ծրագրի անվանումը>* | | | | | | | | | | | | |
| | | *<Միջոցառման անվանումը>* | | | | | | | | | | | | |
| | | *<Միջոցառման անվանումը>* | | | | | | | | | | | | |

**Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2020-2022թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ**

(հազար դրամներով)

| | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. |
|---|---|---|---|---|
| 1. Պետական մարմնի գծով 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները | X | 7334499.2 | 10921271.8 | 19676145.4 |
| 2. <<ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները | 5147344.4 | X | X | X |
| 3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.) | X | 7334499.2 | 10921271.8 | 19676145.4 |
| 3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման) | X | | | |
| 3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով | X | | | |
| 3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը | X | 75000.0 | 0 | 0 |
| 4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2) | X | | | |
| 5. Տարբերությունը 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1) | X | | | |